

ՍԿՍԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՄԵԾ ԶԳՏՈՒՄՆԵՐՈՎ ՈՒ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

Սեպտեմբերի 16-ին Վրաստանի բոլոր դպրոցներում հնչեց նոր ուսումնական տարվա մեկնարկն ազդարարող զանգը: Օրը առանձնահատուկ ու անմոռաց է յուրաքանչյուր դպրոցականի համար՝ իր հետ բերած հույզերով, նորի ձգտումով ու լավատեսական հեռանկարով: Առաջին զանգն առիթ է վերագնահատելու եւ կարելորդելու գիտելիքների դերն ու նշանակությունը, քանի որ հենց գիտելիքն է կյանքի ճանապարհը խորհրդանշող լուսի շողը: Ուստի, սիրելի՛ աշակերտներ, մեծ եռանդով, սիրով ու պրպտելով շարունակեք հարստանալ գիտելիքներով: Իրենց սաների հաջողություններով ու ձեռքբերումներով, առաջիկա ծրագրերով մեզ հետ կիսվում են կրթական համակարգի ու կրթօջախների ներկայացուցիչները:



Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձե:

- Հատկապես շնորհավորում եմ առաջին դասարանցիներին եւ առաջին կուրսեցիներին: Նրանց կյանքում նոր, շատ կարեւոր փուլ է սկսվում, եւ ուզում եմ բոլորին հաջողություն մաղթել: Հաջողակ ուսումնառությունը կյանքում հաջողության հասնելու ամենամուր հիմքն է: Ուստի, բոլորին մաղթում եմ հաջողություններ ուսման մեջ: - Մեզ վարչապետը:

Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարար Գիորգի Ամիլախվարի:

- Թբիլիսիի մուկիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Տղեմալաձեի եւ սակրեբուլոյի անդամ Վլադիմիր Բոժաձեի հետ, սեպտեմբերի 16-ին եղանք լրիվությամբ վերականգնված մայրաքաղաքի թիվ 160 հանրային դպրոցում: Հպարտությամբ նշեմ, որ դպրոցական ենթակառուցվածքի բարելավման նպատակով, երկրի տարածքով շինարարության/վերականգնման լայնածավալ ծրագրեր են ընթանում: Սեպտեմբեր-հոկտեմբերին կավարտվի 60 հանրային դպրոցների ամբողջական վերականգնումը, 100-ից ավելի դպրոցների շինարարություն/վերականգնումը, այդ թվում եւ Սամցխե-Ջավախեթի ու Քվեմո Քարթլիի: 2024-2025 ուսումնական տարում, տարածաշրջանների դպրոցներին աջակցելու շրջանակներում,



ցեց նաեւ դպրոցական ենթակառուցվածքի բարելավման շուրջ ու նշեց, որ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կավարտվի 60 հանրային դպրոցի ամբողջական վերականգնումը, իսկ տարեվերջին 100-ից ավելի դպրոցների շինարարության/վերականգնման գործընթացը: Այս ամենի արդյունքում, ավելի քան 28 հազար աշակերտ ուսումը կշարունակի նորացված, միջազգային չափանիշներին համապատասխան դպրոցներում:

շարունակվում է դպրոցականներին տրանսպորտով ապահովելու ծրագիրը: Նոր ուսումնական տարվանից, նախարարության որոշմամբ, առաջին դասարանում գրանցվելու հնարավորություն է տրվել այն երեխաներին, որոնք 6 տարեկան կդառնան մինչեւ դեկտեմբերի 1-ը:

ՎԵՐԵԼՔՆԵՐՈՎ ՈՒ ՆՈՐ ԶԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐՈՎ ՏԱՐԻ

Սեպտեմբերի 16-ը նոր շրջափուլ բացեց մեր երկրի կրթության ոլորտում: Սկսվեց ուսումնառության եւ աշխատանքային գործունեության եռուն շրջանը: Ախալքալաքի մուկիցիպալիտետի ավելի քան 60 դպրոցներում իրականացվել են նախապատրաստական բոլոր անհրաժեշտ աշխատանքները նոր ուսումնական տարին կազմ ու պատրաստ սկսելու համար: Դպրոցների մեծ մասը սեփական միջոցներով իրականացրել է վերանորոգման աշխատանքներ, շուտով կավարտվի նաեւ մուկիցիպալիտետի երեք՝ Ալաստան, Դադեշ եւ Կոթելիա գյուղերի դպրոցների նոր շենքերի հիմնանորոգման աշխատանքները, եւ աշակերտները, ովքեր ժամանակավոր հաճախում էին հարեւան գյուղերի դպրոցներ, կվերադառնան հարազատ կրթօջախներ: Դպրոցների մեծ մասում ավարտվել է ուսուցիչների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթները, եւ հաստատությունները համալրվել են համապատասխան որակավորված մասնագետներով: Մուկիցիպալիտետի բոլոր դպրոցների աշակերտները ստացել են անվճար դասագրքեր: Սիրելի՛ աշակերտներ, հպարտությամբ թերթեք դպրոցական ուսումնառության յուրաքանչյուր էջ եւ, օգտվելով առկա հնարավորություններից, սովորեք ու դարձեք հասարակության եւ պետության համար պիտանի մարդ: Առանձնահատուկ ողջունում եմ բոլոր 590 առաջին դասարանցիներին: Թող որ նրանց կայացման նոր ճանապարհի շեմին, գիտելիքն ու դպրոցը դառնան կյանքի իմաստուն ուղեկիցը, նրանց լուսավոր հուշերի կանթղը: Սիրելի՛ մանկավարժներ, շնորհավորում եմ նոր ուսումնական տարին սկսելու կապակցությամբ, հաջողություն եւ մաղթում ձեր շնորհակալ ու պատասխանատու աշխատանքում ցանկանալով առավել արդյունավետ ուսումնական տարի: Թող որ այս ուսումնական տարվա սկիզբը արգասաբեր ու խոստումնալից լինի, երբ՝ լուսավոր ու անխափան: Մաղթում եմ բոլորիս վերելքներով ու նոր ձեռքբերումներով լի տարի:

Սեպտեմբերի 16-ը նոր շրջափուլ բացեց մեր երկրի կրթության ոլորտում: Սկսվեց ուսումնառության եւ աշխատանքային գործունեության եռուն շրջանը: Ախալքալաքի մուկիցիպալիտետի ավելի քան 60 դպրոցներում իրականացվել են նախապատրաստական բոլոր անհրաժեշտ աշխատանքները նոր ուսումնական տարին կազմ ու պատրաստ սկսելու համար: Դպրոցների մեծ մասը սեփական միջոցներով իրականացրել է վերանորոգման աշխատանքներ, շուտով կավարտվի նաեւ մուկիցիպալիտետի երեք՝ Ալաստան, Դադեշ եւ Կոթելիա գյուղերի դպրոցների նոր շենքերի հիմնանորոգման աշխատանքները, եւ աշակերտները, ովքեր ժամանակավոր հաճախում էին հարեւան գյուղերի դպրոցներ, կվերադառնան հարազատ կրթօջախներ: Դպրոցների մեծ մասում ավարտվել է ուսուցիչների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթները, եւ հաստատությունները համալրվել են համապատասխան որակավորված մասնագետներով: Մուկիցիպալիտետի բոլոր դպրոցների աշակերտները ստացել են անվճար դասագրքեր: Սիրելի՛ աշակերտներ, հպարտությամբ թերթեք դպրոցական ուսումնառության յուրաքանչյուր էջ եւ, օգտվելով առկա հնարավորություններից, սովորեք ու դարձեք հասարակության եւ պետության համար պիտանի մարդ: Առանձնահատուկ ողջունում եմ բոլոր 590 առաջին դասարանցիներին: Թող որ նրանց կայացման նոր ճանապարհի շեմին, գիտելիքն ու դպրոցը դառնան կյանքի իմաստուն ուղեկիցը, նրանց լուսավոր հուշերի կանթղը: Սիրելի՛ մանկավարժներ, շնորհավորում եմ նոր ուսումնական տարին սկսելու կապակցությամբ, հաջողություն եւ մաղթում ձեր շնորհակալ ու պատասխանատու աշխատանքում ցանկանալով առավել արդյունավետ ուսումնական տարի: Թող որ այս ուսումնական տարվա սկիզբը արգասաբեր ու խոստումնալից լինի, երբ՝ լուսավոր ու անխափան: Մաղթում եմ բոլորիս վերելքներով ու նոր ձեռքբերումներով լի տարի:



ԹԵՐԵՉԱ ԶԻՎՅԱՆ Ախալքալաքի ռեսուրս-կենտրոնի պետ

ՈՒՍՄԱՆ ՀԱՋՈՂ ԸՆԹԱՑՔԻ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

Նիսնոժմինդայի կրթական ռեսուրս-կենտրոնը շնորհավորում է բոլոր դպրոցականներին, ուսուցիչներին, ծնողներին 2024-2025 ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, ցանկանում ենք առաջընթաց, ձեռքբերումներ: Խախորդ ուսումնական տարում մեր դպրոցականներն ակտիվ կերպով մասնակցել են առարկայական տարբեր օլիմպիադաների, մարզական խաղ-մրցույթների եւ գրանցել հաջողություններ: Առանձնահատուկ շնորհավորում ենք մուկիցիպալիտետի կրթօջախների առաջին դասարանցի 300 աշակերտներին: Նիսնոժմինդայի մուկիցիպալիտետի դպրոցներում (5 վրացական, 3 ռուսական եւ 30 հայկական) աշխատում է մոտ 1000 ուսուցիչ, ովքեր մեծ եռանդով ներդրված են մասնագիտական զարգացման ուղղությամբ կազմակերպվող վարժանքներին, միջոցառումներին: Թող նոր ուսումնական տարին լինի հազեցված ու արդյունավետ: ԴԱՎԻԹ ԶԵՂԳԻՆԻՉԵ Նիսնոժմինդայի կրթական ռեսուրս-կենտրոնի պետ



ԴԱՎԻԹ ԶԵՂԳԻՆԻՉԵ Նիսնոժմինդայի կրթական ռեսուրս-կենտրոնի պետ

ԱՆՈՒՇ ՔԱՂՔՅԱՆ. «ՄԻՇՏ ԱՎԵԼԻ ԹԱՆԿ Է ԱՅՆ, ԻՆՉ ՏՔՆԱՆՔՈՎ ԵՍ ՎԱՍՏԱԿՈՒՄ»

Դպրոցական անմոռանալի իրադարձության՝ «Առաջին զանգի» եւ նրա հետ սկսվող նոր ուստարվա մասին թեմայով մեր գրուցակիցն է Ախալքալաքի մուկիցիպալիտետի Մերենիա գյուղի հանրային դպրոցի տնօրեն Անուշ Քաղքյանը:

- Տիկին Անուշ, գիտե՞նք, որ Դուք երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտի կիրճնեմտիկայի ֆակուլտետի շրջանավարտ, մասնագիտությամբ էլեկտրոնային տեխնիկայի ինժեներ լինելով՝ Ձեր աշխատանքային կենսագրությունն սկսել եք դպրոցում: Շուրջ 40 տարում անցել եք՝ ավագ ջոկատավարի-դասավարի-ուսումնական մասով փոխտնօրենի եւ տնօրենի աշխատանքային բարդ ճանապարհը, որն, անկասկած, բերել է անսպասելի խնդիրներ, տքմանք, գերլարում, հուսահատության ցավոտ պահեր... - Այո՛, եւ երիցս՝ այո՛, մանկավարժությամբ զբաղվել եմ ընտանեկան հանգամանքների բերումով: Հինգերորդ կուրսում ես ու համակուրսեցի ամուսինս արդեն երեխա ունեինք, գյուղում մեզ հարմար աշխատանք չկար, ստիպված ընդունեցի Մերենիայի դպրոցի այն օրերի ղեկավարության՝ ավագ ջոկատավար աշխատելու առաջարկը... Այո՛, թեեւ իմ կյանքում մանկավարժությունը չի եղել կանխամտածված ընտրություն, բայց հիմա բնավ չեմ ավստում, որ ողջ կյանքս ցմիրել եմ դպրոցին... - Ի՞նչ սովեց Ձեզ «Դպրոց» հարթակը: - Մղեց սեփական ուժերի ճանաչման... Քո ձեռքի տակ աճած սանի ամենափոքր հաջողությունն իսկ մեծ երջանկություն է: Չգիտեմ, թե որ պահից կապվեցի դպրոցի հետ, բայց գիտեմ, որ գործս արել ու անում եմ պատասխանատվության զգացումով, ամենայն մանրամասնությամբ: Այդ ջանքերի շնորհիվ էլ կանաց-կանաց սիրել եմ իմ երկրորդ՝ ճակատագրով տրված մասնագիտությունը: Բոլորս գիտենք, որ միշտ ավելի թանկ է այն, ինչ տառապանքով ես ձեռք բերում:

րել եմ իմ երկրորդ՝ ճակատագրով տրված մասնագիտությունը: Բոլորս գիտենք, որ միշտ ավելի թանկ է այն, ինչ տառապանքով ես ձեռք բերում: - Ինչպե՞ս է Ձեր դպրոցը դիմավորում հերթական ուստարին: - 2024-2025 ուսումնական տարին դիմավորում ենք կազմ ու պատրաստ: Կրթաշխարհի մշակներիս հաճելի նորույթով՝ աշխատավարձերի բարձրացմամբ, առաջին դասարանցիների թվի աճով: Անցյալ տարի առաջին դասարանում ունեինք ինն աշակերտ, այս տարի ունենք 12: Երեւի, սա ցուցանիշն է նաեւ մեր գյուղի բնակչության աճի... - Մի-փոքր՝ դպրոցի անցած ճանապարհի եւ, մասնավորապես, նրա առօրյայի մասին: - Մեր դպրոցը հիմնադրվել է 1835-ին՝ սկզբում գործելով իբրեւ ծխական դպրոց: Այսօր աշակերտների թիվը գրեթե 100 է, մանկավարժներս 18-ն ենք: Երիտասարդ կադրերի պակաս կա, որովհետեւ բուհն ավարտելուց հետո ոչ ոք չի ցանկանում գյուղ վերադառնալ: Գյուղական համայնքներում միշտ ցավոտ է եղել եւ շարունակում է մնալ երաժշտության ու արվեստի մասնագետների անհրաժեշտություն: Խոստումնալից չէ նաեւ բնագիտամաթեմատիկական մանկավարժներով համալրվելու հեռանկարը. երիտասարդներին գրավում են ժամանա-



կալից մասնագիտությունները: - Ինչպե՞ս է ընթանում աշակերտների կողմից վրացերենի ուսուցումը: - Վրաց լեզուն դպրոցում դասավանդում է հինգ ուսուցիչ՝ Թամարա Մելիքյանը, Նինո Խմալաձեն, Ալիսա Ազարյանը, Մելանյա Ամիրջատյանը, Լիզա Ջեյրանյանը: Դպրոցի վրաց լեզվի ամբիոնը գործում է շատ ակտիվ, կազմակերպվում են տարբեր միջոցառումներ՝ նվիրված «Մայրենի լեզվի օր», «Ամանոր», «Կանանց միջազգային օր» եւ այլ տոների: Մեր սաները մասնակցում են օլիմպիադաների: Ընդհանրապես, երեխաների հետաքրքրությունը շատ մեծ է՝ պետական լեզուն սովորելու հարցում: Զրուցեց ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱՅԱՆԸ



ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

## ՄԵԾ ԶԳՏՈՒՄՆԵՐՈՎ ՈՒ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

### ԳԻՏԵԼԻՔԸ ԴՁՈՐ ԶԵՆՔ Է

Սրտանց շնորհավորում են մեր երկրի բոլոր ուսուցիչներին, ծնողներին եւ աշակերտությանը 2024-2025 նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Գիտելիքը հզոր զենք է ու կռվան կյանքի բոլոր դժվարությունները եւ խոչընդոտները հաղթահարելու համար:

Այս տարի մեր կրթօջախն ընդունեց 7 մանուկների, որոնք լույս աշքերով արժանացան աշակերտի կոչմանը եւ առաջին անգամ հուզական սրտով ու բեկբեկուն քայլերով ոտք դրեցին դպրոցի շենքից ներս:



**ԱՐՓԻՆԵ ԲԱՂԱՆՅԱՆ**  
Բորժոմի մունիցիպալիտետի Տարածողորհի հանրային դպրոցի տնօրեն

Նախորդ ուստարում ավարտած 10 շրջանավարտից 3-ն ընդունվել են Վրաստանի, իսկ 2-ը ուսումը շարունակում են Հայաստանի Հանրապետության բուհերում: Հատկանշական է, որ շրջանավարտներից Արման Մուրադյանն ընդունվել է Վրաստանի Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլի անվան պետական համալսարան՝ անվճար հիմունքներով:

### ՈՐՈՒՍ ԵՆՔ... ԵՎ ՍԿՍՎԵՑ ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն 20 օր է, ինչ սկսվել է միջազգային չափանիշներին համապատասխան մեր դպրոցի եռահարկ նոր շենքի կառուցումը: Կրթօջախում բարձր հիմքերի վրա է դրված կրթադաստիարակչական գործընթացը: Այդ է պատճառը, որ ամեն տարի ունենում ենք 4-5 ոսկե մեդալակիր: Այս տարվա 5 ոսկե մեդալակիրները բարձր միավորներով, անվճար ընդունվել են Սամցխե-Ջավախեթի պետական համալսարան:

Սիրելի՛ աշակերտներ, մանկավարժներ, սրտանց շնորհավորում են ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ: Առանձնակի ջերմությամբ բարեմաղթում են մեր կրթօջախ առաջին անգամ ոտք դրած 19 առաջին դասարանցիներին:

Արդյունավետ ու արգասաբեր ուսումնառություն են մաղթում բոլորին:

**ԱՐԱՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ**  
Ախալցխի մունիցիպալիտետի Ծուղորհի հանրային դպրոցի տնօրեն

### ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՈՒՇԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

Սիրելի՛ աշակերտներ, ուսուցիչներ, ուսանողներ եւ առաջին անգամ Օգնիի հանրային դպրոց հաճախող երեք հրաշք փոքրիկներ, շնորհավորում են 2024-2025 ուստարին սկսելու առթիվ: Շնորհավորում են նաեւ 2023-2024 ուստարվա հինգ շրջանավարտներից Գնել Սիմոնյանին, ով «1+4» ծրագրով ուսումն անվճար կշարունակի Թբիլիսիի Իլիայի անվան պետական համալսարանում:

Շնորհակալություն են հայտնում Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությանը, առաջին դասարանցիներին համակարգչով եւ բոլոր աշակերտներին անվճար ուսումնական դասագրքերով ապահովելու համար: Առիթից օգտվելով՝ շնորհակալություն են հայտնում նաեւ Ծալկայի մունիցիպալիտետի ռեսուրս-կենտրոնի պետ Արսեն Ջանիսյանին, մեր դպրոցներին ժամանակին ու ամեն առիթով ուշադրություն դարձնելու համար:



**ՌՈՒԲԵՆ ՀԱՆՍՅԱՆ**  
Ծալկայի մունիցիպալիտետի Օգնիի հանրային դպրոցի տնօրեն

### ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԻ ՄՊԱՍՈՒՄՈՎ

Սեպտեմբերի 16-ն է, մայրաքաղաքի թիվ 104 հանրային դպրոցի սանդերն ու նրանց ծնողները, հետևելով թողնելով նախապատրաստական եռուզեռը, շտապում են կրթօջախի բակ: Տեսակցություն, աշխույժ իրարանցում է շուրջը, լսվում են դպրոցականների ուրախ ու ոգևորիչ ձայները, ժպտոներ, հուզմունք, ծաղիկներ...



Տոնական այդ պայծառ օրը միջոցառմամբ սկսելու ավանդույթի համաձայն, տնօրեն Իրինա ժամկոչյանը հայտարարում է նոր ուսումնական տարվա մեկնարկը: Հնչում են Վրաստանի, Հայաստանի Հանրապետության ու դպրոցի օրհներգերը: Ելույթի են հրավիրվում օրը կարերտելու եւ դպրոցին սատարելու նպատակով եկած պատվավոր հյուրերը: Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանն իր շնորհավորական խոսքում ընդգծում է Հայաստանի սահմաններից դուրս, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ՝ տարածաշրջաններում, գործող միակ պետական հայալեզու դպրոցների գոյությունն ու երախտիքի եւ գնահատանքի խոսքերը հղում Վրաստանի իշխանություններին:

Անհատի զարգացման ու կայացման գործում գիտելիքների, կրթության դերի առաջնահերթ նշանակության մասին ու հայ երեխային հայկական

դպրոց չբերելու մտահոգությամբ կիսվում են հաջորդիվ ելույթ ունեցողներ՝ Վրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Գեղորգ եպիսկոպոս Դավթյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրջյանը, Պ. Աղաջյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի ԿԳԵ նախարարության աշխատակցուհի Կարինե Մանուկյանը, բանասիրության պրոֆեսոր, «Արեւիկ» մանկական բարեգործական հիմնադրամի նախագահ Եմմա Ախտյանը, «Վրացահայերի միության» նախագահ Մարի Առաքելյանը, «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Եվգեն Մարկոսյանը:

Առաջին զանգի ղողանջների ներքո առաջին դասարանցիները երկինք են արձակում ճերմակ փուչիկները՝ ի նշան խաղաղության եւ երազանքների:

**ՎԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ՀԱՐՍԱՆԱԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ

Մարդաշատ էր մայրաքաղաքի թիվ 103 հանրային դպրոցի բակը: Այս կրթօջախի համար եւս նոր ուսումնական տարին հանդիսավոր կերպով դիմավորելը բարի ավանդույթ է: Վրաստանի օրհներգի ու պետական դրոշի բարձրացմամբ սկսվեց տոնական օրվան նվիրված հավաքը: Նոր ակնկալիքներով դպրոցի տնօրեն Արչիլ Չխաիձեն շնորհավորում է կրթօջախի վրացական դասարանների ու հայկական բաժանմունքի սաներին, մանկավարժներին, ծնողներին: Նա ներկայացնում է նախորդ տարվա կրթական ու արտադասարանական խմբակների հաջողությունները: Առանձնացնում է ուսուցիչների ձեռքբերումները, հանձնելով համապատասխան քննություններ՝ հաստատության 4 մանկավարժ ստացել է մեծթղթի (խորհրդատուի), 9-ը՝ առաջատարի կարգավիճակ, իսկ 2-ն էլ դարձել են մայրաքաղաքի տարբեր դպրոցների տնօրեններ:



Կրթօջախի տոնական օրվա հյուրերն էին «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր, Վրաստանի վաստակավոր լրագրող Վան Բայբուրջյանն ու Վրաստանի ԿԳԵ նախարարության աշխատակցուհի Կարինե Մանուկյանը: Նրանք, ուսմասվար Հասմիկ Պալիկյանի ուղեկցությամբ, հայկական մասնաճյուղի դասարաններում շփվեցին աշակերտների ու մանկավարժների հետ, գրուցեցին գիտելիքներով հարստանալու, իրագրավածության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտության շուրջ:

**ՎԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

### ՍՏԵՂՑԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ



## ԾԱՆՈԹԱՑԵՔ ՀԱՅԱԼԵԶՈՒ 85-ԱՄՅԱ ՆՈՒՆՈՒ ԶԻՐԱՇՎԻԼԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

**Մի առիթով Մեծն Գոլի.Թունյանն ասել է. «Բանաստեղծությունը կյանքի արտահայտությունն է, կամ ավելի լավ է ասել՝ ինքը կյանքն է: Այդ բանաստեղծության մեջ կյանքն ավելի կյանք է, քան թե իրականության մեջ»:**

Այդպես է նաև 85-ամյա Նունու Զիրաշվիլիի դեպքում, ում ստեղծագործական աշխարհը բացվել է 10 տարեկանում: Ծնվել է Վրաստանի Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի Դուռնուկ գյուղում՝ Գիորգի Զիրաշվիլիի ու Արուսյակ Բաղայանի ընտանիքում: Ստացել է ընդամենը ութնամյա կրթություն ու Թբիլիսիի հայտնի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ մորից ժառանգել գրելու ձիրքը: Բանաստեղծությունը դարձել է նրա կյանքի անկախ ուղեկցիչը, սակայն տպագրության նպատակով ոչ մի անգամ չի դիմել որեւէ պարբերականի, չի փորձել իր խոհերով ու հույզերով կիսվել մարդկանց հետ: 65 տարի առաջ Արամ Ավարդյանի հետ կազմել է գեղեցիկ ընտանիք, տեղափոխվել մայրաքաղաք, դաստիարակել է Էլզա, Միշա Ավարդյաններին, տվել բարձրագույն կրթություն: Ի դեպ, ստեղծագործելու ձիրքն ունի նաև դուստրը՝ Էլզան: Ընտանեկան հոգսերով ծանրաբեռնված՝ տիկին Նունուն ոչ միշտ է կարողացել զբաղվել բանաստեղծությամբ: Երկար տարիների դարպից հետո, նորից գրի է վերցրել ձեռքն

ու վերսկսել գրելը: Տարբեր թեմաներով մանկության հուշերի, ծննդավայրի, Վրաստանի, Հայաստանի, բնության, սիրո, նաեւ հարազատների, ծնողների, թոռների մասին բանաստեղծություններ է գրում հայերեն ու վրացերեն:

«Մերը սուրբ է» բանաստեղծության մեջ Զիրաշվիլին կերտել է սիրո անաղարտ զգացմունքով լի քնարական հերոսների գուսպ ու ամոթխած կերպարներ: Բանաստեղծությունն ավարտվում է հեղինակի բողոք-ընդվզումով, որը դրսևորվում է նոր ժամանակներում խաղալիքի վերածված վեհ ու անկաշառ սիրո պակասով:

«Վրաստան» բանաստեղծության մեջ տիկին Նունուն գովերգում է իր հրաշք երկիրը, հյուրընկալ ժողովրդին: Բանաստեղծությունն ավարտվում է հետելյալ տողերով.

**Գեղեցիկ ես դու, չքնաղ Վրաստան, Մեր հողու զանձն ես բյուր ու բուրաստան,**

**Գովքդ վաղուց է արել պատվական Բանաստեղծ-գուսան Մեծն Սայաթ-Նովան:**

Վրաց եւ հայ եղբայր ժողովուրդների ազ-

նիվ զավակն է տիկին Նունուն, ով առանձնահատուկ նվիրում ու սեր ունի իր երկու հայրենիքների հանդեպ էլ: Նրա քնքուշ հոգին հավասարապես տրոփում է երկու ժողովուրդների ցավով եւ ուրախությամբ, ձեռքբերումներով ու հաջողություններով: Մեր երկու ազգերի դարավոր բարեկամության ու համակեցության գովքն է արված «Իմ հրաշք քաղաք» բանաստեղծության մեջ.

**Հրաշք քաղաքի բնությանը տարված//Տարբեր ազգեր են այնտեղ հավաքված, //Պարեր առաջ են իրար միացել//Հայն ու վրացին եղբայր են դարձել://Միշտ էլ սիրով են իրար հետ ապրել//Ո՛չ արհամարհել, ո՛չ վիրավորել//Մի կտոր հացը իրար հետ կիսել//Միրել են իրար ու ամուսնացել://Խաղաղ, համերաշխ միասին ապրել//Սիրով զավակներ պահել, մեծացրել//Ուրախությունը իրար հետ կիսել//Տխրության ժամին իրար ձեռք մեկնել:**

Կարող ենք եզրակացնել, որ այս սքանչելի վրացուհին, համեստ իր տողերով մի փոքրիկ լույս է տարածում շուրջն ու լավատեսություն բերում մարդկանց սրտերին:

**ՎԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՄԱՆԻՄԱՐԻ ԿԱՅՈՒՄԻ ԿԱՅՈՒՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԳԱՔՆԱԺՈՂՈՎԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Գագաթնաժողովի բացման արարողությանը ելույթներով հանդես եկան Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանը, Ազգային ժողովի փոխնախագահ Հակոբ Արշակյանը, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը, ԱՄՆ կոնգրեսական Ջեքի Սփեյերը:

Գագաթնաժողովի երկրորդ օրը մասնակիցների առջև ելույթ ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Գագաթնաժողովի աշխատանքային օրերը ներառում



թերի գլխավոր խմբագիր Վան Բայբուրյանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետսոցիալ-տնտեսական հետազոտության ղեկավար Արմեն Բախանյանը, «Վրացահայերի միության» ՀԿ նախագահ Մարի Առաքելյանը, Ախալցխայի «Մեդիա» վերլուծական կենտրոնի ղեկավար Էդուարդ Այվազյանը, Վրաստանի հանրային հեռուստատեսության Առաջին ալիքի հայկական հաղորդումների լրագրող Ռուկի Ավագյանը, Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր Արսեն Հախվերդյանը, Վրաստանի տարբեր տարածաշրջանների հասարակա-



ներ: Ընդհանուր առմամբ, գագաթնաժողովին ներգրավվեց 180 բանախոս եւ մոդերատոր՝ 25 երկրից:

Հիշեցնենք, որ Համաշխարհային հայկական առաջին գագաթնաժողովն առաջին անգամ անցկացվել է 2022 թվականին, որին մասնակցություն են ունեցել 600-ից ավելի մասնակիցներ 50-ից ավելի երկրներից եւ 130 բանախոսներ 15 երկրներից: Գագաթնաժողովի ընթացքում քննարկվել է համահայկական նշանակության հարցերի լայն շրջանակ, որոնց արդյունքում բարձրաձայնված առաջարկները եւ հարցադրումները հիմք են հանդիսացել Հայաստան-Սփյուռք գործակցության ռազմավարության մշակման համար:

Գագաթնաժողովի մասնակիցների թվում էին Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչներ՝ «Վրաստան»

կան կազմակերպությունների ներկայացուցիչներ:



էին անվտանգություն, կայունության գարգացում, համայնքների հզորացում եւ հայրենադարձություն ուղղությունները, որոնք ներկայացվեցին իրենց ենթաշերտերով տարաբնույթ ձեւաչափերի շրջանակներում: Գագաթնաժողովին անցկացվեցին 6 պանելային քննարկումներ, 22 համաժամանակյա նիստ, կլոր-սեղան քննարկում, աշխատաժողով, 3 թեմատիկ ցուցահանդես եւ մշակութային միջոցառում-

հայկական նշանակության հարցերի լայն շրջանակ, որոնց արդյունքում բարձրաձայնված առաջարկները եւ հարցադրումները հիմք են հանդիսացել Հայաստան-Սփյուռք գործակցության ռազմավարության մշակման համար:

Գագաթնաժողովի մասնակիցների թվում էին Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչներ՝ «Վրաստան»

ԳՈՐԾԱԴԻՐԸ ԲՆՆԱՐԿԵՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏՐՅՈՒՑԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Սեպտեմբերի 17-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ անցկացվեց խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվեց 2025 թվականի պետական բյուջեի նախագիծն ու հարկարյուցետային շրջանակը:

Հայաստանի ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը խորհրդակցությանը նախ ներկայացրեց տնտեսական եւ հարկարյուցետային ընթացիկ զարգացումները, բյուջեի մակրոտնտեսական շրջանակը, որոնց հիման վրա մշակվել է պետբյուջեի նախագիծը: Մանրամասներ ներկայացվեցին ոլորտային ծախսերի եւ ըստ գերատեսչությունների՝ առաջարկվող չափաքանակների վերաբերյալ: Անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանի կառավարության առաջնահերթություններին եւ նպատակադրումներին, հարկեր/ՅՆԱ հարաբերակցության բարելավմանը, հարկարյուցետային քաղաքականության կան-

խատեսումներին: 2025թ. պետական բյուջեի նախագծի առնչությամբ ծավալվեց մտքերի փոխանակություն, ներկայացվեցին մի շարք հարցադրումներ ու առաջարկություններ:

Նիկոլ Փաշինյանը ընդգծեց բոլոր գերատեսչությունների կողմից բյուջեով նախատեսված ծրագրերի եւ միջոցառումների արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը: Ամփոփելով



խորհրդակցությունը վարչապետը հանձնարարեց պետբյուջեի նախագիծը բերել վերջնական տեսքի՝ հաշվի առնելով խորհրդակցության ընթացքում ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները:

ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ՄԵԴԱԼԱԿԻՐ ՕԼԻՄՊԻԱԿԱՆՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 18-ին, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի արտահերթ գործկոմի նիստի շրջանակներում, պարգևատրվեցին Փարիզի Օլիմպիական խաղերի մեդալակիրներն ու նրանց մարզիչները:

ՀԱՕԿ գործկոմի նիստում Ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանն ամփոփեց «Փարիզ-2024»-ում հայ մարզիկների ելույթները:

Օլիմպիական խաղերի արժաթե մեդալակիրներ Արթուր Ալեքսանյանը, Արթուր Դավթյանը եւ Վարազդատ Լալայանը պարգևատրվեցին 20 միլիոն դրամով, Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Մալխաս Ամոնյանը՝ 15 միլիոն դրամով: Դրամական խոշոր պարգևների (10 միլիոն դրամ) արժանացան նաեւ Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Արմեն Բաբալարյանը, մարմնամարզության հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանը, ծանրամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Փաշիկ Ալավերդյանը, հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի մարզիչ



Գեորգ Ալեքսանյանը: Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման, օլիմպիական գաղափարների տարածման գործում ներդրած ծառայությունների համար ՀԱՕԿ-ի ոսկե շքանշանակով պարգևատրվեցին Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Խաչատրյանը, հրաձգության ֆեդերացիայի նախագահ Արթուր Հովհաննիսյանը:

Հիշեցնենք, որ Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կայացած 33-րդ Օլիմպիական խաղերում Հայաստանը ներկայացավ 15 մարզիկով եւ նվաճեց 4 մեդալ: Ամառային Օլիմպիական խաղերի արժաթե մեդալակիրներ դարձան մարմնամարզիկ Արթուր Դավթյանը, ըմբիշ Արթուր Ալեքսանյանը, ծանրորդ Վարազդատ Լալայանը: Բրոնզ նվաճեց ըմբիշ Մալխաս Ամոնյանը:

ՎԵՐԱՅՎԻ ԿՅՅՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՆՆԵՐԸ

Հայաստանի Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը կողմ է վերացնել խորհրդարանական կայուն մեծամասնության սահմանադրական պահանջը, սակայն դեմ է այդ փոփոխությունները իրականացնել 2026 թվականի Ազգային ժողովի ընտրություններին ընդառաջ: Խորհուրդը նաև որոշում կայացրեց սեպտեմբերի 19-ի նիստին: Կայուն մեծամասնության դրույթից հրաժարվելու առաջարկը նախատեսում է սահմանադրության 89-րդ հոդվածում սահմանվել. եթե որևէ ուժ չի հավաքել մեծամասնություն, ապա խորհրդարանը չի համարվում չեղարկված եւ չի ունենում առաջին նիստ, քանի դեռ քաղաքական ուժերը չեն կազմել կոալիցիա: Իսկ եթե սահմանված ժամկետում կառավարություն չի չեղարկվում եւ կուսակցությունները համաչայնության չեն գալիս կոալիցիա կազմելու հարցում, երկրի նախագահը նշանակում է նոր ընտրություններ:

«ՀԱՍԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՆՏԱՆ ՀԱՄԱՐ» ՄԵԴԱԼ՝ ԿԱՍՈ ԳԱՆՈՒՍՅԱՆԻՆ

Հայաստանի ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի փոխնախարար Արամ Հովհաննիսյանը սերտ համագործակցության համար շնորհակալություն հայտնեց Հայաստանում Վրաստանի ՆԳ նախարարության կողմից Կամո Գալուստյանին նշելով, որ երկու երկրների իրավապահ կառույցների փոխգործակցությունը փարիզյան ընթացքում հաստատագրել է իր արդյունավետությունը: Արամ Հովհաննիսյանը, համագործակցության ամրապնդման գործում անչնական ավանդ ունենալու, ինչպես նաեւ հանցագործությունների բացահայտման աշխատանքներում ՆԳՆ ոստիկանությանը գործունե աջակցություն ցուցաբերելու համար, Կամո Գալուստյանին պարգևատրել է «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

23.09.2024 Սիմեոն Սյունակյացի հիշատակության օր

ՍԵՊՏԵՄԲԵՐ



ցուն կից մի փոքրիկ տնակում, ապրում էր աղոթքներով՝ միշտ մերժելով իր անուսնու դավանափոխ լինելու առաջարկներն ու սպառնալիքները: Սուրբ Շուշանիկը 7 տարի անընդմեջ իր անուսնուց հալածվում է՝ ապավինելով միայն իր աներեր հավատին առ Աստված եւ պապից՝ Սուրբ Սահակից իրեն կտակված Սուրբ Ավետարանին: Սուրբ Շուշանիկը 470 թվականին իր կյանքն ավարտում է մարտիրոսական մահով: Ըստ Ոխտանես պատմիչի, նրա գերեզմանը Ցուրտավում է:

28.09.2024 Սուրբ Գեորգ քաջամարտիկ զորավարի, Ռոմանոս Երզնցողի հիշատակության օր

24.09.2024 Մեծ Վարդանի դատեր՝ Շուշանիկի հիշատակության օր

Սուրբ Շուշանիկը Վարդան Մամիկոնյանի ավագ դուստրն էր, որին նախապես Վարդանի էին կոչել, բայց հայոց պատմության եւ վարքաբանության մեջ հայտնի է Շուշանիկ փառաբանական անունով: Նա անուսնացած էր վրաց Աշուղա բղեշխի որդի Վարսագենի հետ: Չնայած նրանք 3 տղա եւ 1 աղջիկ ունեին, սակայն ամուսինը, բղեշխ դառնալով, կրոնափոխ էր եղել եւ անուսնացել պարսիկ Պերոզ իշխանի զորանշի հետ: Իսկ Շուշանիկը եկեղեց

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿՓԱԿՑՎԻ ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԸ

Սեպտեմբերի 20-ին կայացավ Թբիլիսիի սակրեբուլոյի կրթության ու մշակույթի հանձնաժողովի նիստը:



Հանձնաժողովը միաձայն որոշում կայացրեց՝ Թբիլիսիում ծնված եւ Երեւանում վախճանված աշխարհահռչակ քանդակագործ ու գեղանկարիչ Երվանդ Քոչարի (1899-1978թ.) հուշատախտակը փակցնել նրա թբիլիսյան տան, Հանրապետության հրապարակից սկսվող Պուշկինի փողոցի թիվ 13-ի պատին: Նշյալ խնդրագրով Սակրեբուլոյին էր դիմել Վրաստանում ՀՀ դեսպանությունը: Հանձնաժողովի նիստին ներկա էր նաեւ ՀՀ դեսպանության հյուպատոս Եվա Ահարոնյանը:

Երվանդ Քոչարի հուշատախտակի տեղադրման վերաբերյալ սակրեբուլոյի դրական երաշխավորագիրը ուղարկվեց Թբիլիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանին կից հատուկ հանձնաժողովի քննարկմանը:

«ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՇԱԲԱԹՅԱԿԸ» ԿՆՇԱՆԱՎՈՐՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՎ

Սեպտեմբերի 16-22-ը Թբիլիսիում կանցկացվի «Շարժումակայան եվրոպական շաբաթյակը», որին Թբիլիսի մասնակցում է արդեն չորրորդ անգամ:



Թբիլիսիի քաղաքապետարանի մամուլի ծառայության կողմից տարածած տեղեկատվության համաձայն, այս տարվա շաբաթյակի թեման «Ընդհանուր հանրային տարածք» է, իսկ միջոցառման նպատակը՝ տարբեր միջոցառումների միջոցով քաղաքային կայուն շարժումակայության մասին իրազեկվածության բարձրացումը, հասարակական տրանսպորտով տեղաշարժի խթանումն ու քայլերը, հեծանիվը: «Շարժումակայան եվրոպական շաբաթյակի» շրջանակներում, Թբիլիսիի տրանսպորտի եւ քա

ղաքաշինության գործակալությունը գործընկեր կազմակերպությունների եւ պետական գերատեսչությունների հետ համատեղ նախատեսում է տարբեր միջոցառումներ: Մասնավորապես, նախատեսված է նոր ավտոբուսների ցուցահանդեսի, հեծանվավազքի անցկացում, ընդ որում՝ միջոցառման մասնակիցներին խորհրդանշական կերպով կտրամադրվեն հեծանիվների վարորդական վկայականներ:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍԱՐՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ՝ «ՂԱԶԲԵԳԻ» ՄԱՔՍԱԿԵՏ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Վրաց-ռուսական «Ղազբեգի» (Վերին Լարս) մաքսակետ տանող ճանապարհին, երթուղիները, բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար, ժամանակ առ ժամանակ կսահմանափակվի:

Վրաստանի ավտոճանապարհների դեպարտամենտի տեղեկատվության համաձայն, «Ղազբեգի» մաքսակետի տարածքում միջազգային նշանակության ավտոճանապարհին նախատեսվում են ճանապարհների վթարային վերանորոգման աշխատանքներ:

«Ուստի, ընթացող աշխատանքների ընթացքում, սեպտեմբերի 18-ից հոկտեմբերի 2-ը, ժամը 06:00-09:00-ը, կսահմանափակվի բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների երթուղիները»,- նշված է դեպարտամենտի հաղորդագրության մեջ:

9x9 grid with numbers 1-56 placed in various cells, representing a calendar or schedule.

Խ Ա Չ Բ Ա Ռ

Հորիզոնական. 1. Հայ անվանի գրող, բանաստեղծ: 6. Ֆրանսիացի հանրահայտ գրող Գի դը ...: 10. Մեծ թռչնի տեսակ: 11. Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում թաղված աշուղ, բանաստեղծ: 12. Ամերիկացի կինոդերասան եւ մարտարվեստների վարպետ Չակ ...: 14. Հայ պետական գործիչ, բղեշխ: 16. Ակսել Բակունցի ստեղծագործություններից: 20. «... Գանձնի նկարեց, Նանը նայեց ծիծաղեց» («Հայերենի այբուբենին» նվիրված բանաստեղծություններից): 21. Լեհ գրող Հենրիկ Սենկևիչի վեպը «... երթա»): 22. Առողջարանային քաղաք ՌԴ-ում: 24. Միավորված ազգերի կազմակերպություն: 25. Թբիլիսիում ծնված հայ գրող Նար-Ռոսի երկերից «... Սարոյան»: 26. Հոր թույն ունեցող օձ: 27. Հայկական զովագուցիչ ընպելիք: 29. ... նա, ... կո, ... վա: 30. Շվեյցարացի օսկարակիր դերասանուհի ... Գարբո: 31. Խաղաթղթի տեսակ: 32. Ժամանակակից ավտոմեքենաների կորպորացիա «... մոթոր» Հայաստանում եւ Վրաստանում: 34. Խելացի, ուշադիր: 35. Ընտանի թռչուն: 37. Դերասանուհի «Մեր բակը» ֆիլմում, լուսահոգի ... Մնացականյան: 38. ... եւ եվա: 40. Շքեսպիրյան հերոս: 42. «Երկնեց ... եւ երկիր» («Վահագնի ծնունդը»): 45. Ռաֆֆու վեպերից «Դավիթ ...»: 47. Դատարկ, փուխ: 48. Ինքնաթիռի մակնիշ: 49. Մա..., Ֆա..., 51. Դիրիժորի հագին է: 53. «Մայրիկ» ֆիլմի ռեժիսոր ... Վեռնոյ: 54. Ծովի ալիք: 57. Հերոս «Վարդանանք» վեպում ... Գնունի: 59. Գարնան ամիս: 60. Մոնղոլական Ոսկե հորդայի խան: 61. Այս լեռներից «աշխարհի տանիք» են անվանում: 63. Հոլանդացի դիրիժորից, ում

հայրը փառաբանված անվանում էր ...: 64. Ցածրակարգ, ստոր: 65. Քաղաք Կիլիկիայում: ՈՐՂՈՆԱՅՑՆՆ. 1. Հայաբնակ ավան Վրաստանի Մառնեուլիի մունիցիպալիտետում: 2. Սեկ եւ երեք գրո ունեցող թիվ: 3. «Հայոց բերդը» վեպի հեղինակը: 4. Խոհանոցային ...: 5. Ղ. Աղայանի գոված քարը: 6. Արցախի հերոս ... Մելքոնյան: 7. Ե՛վ պարանոց, ե՛ւ ջրանցք: 8. Հայոց էպոսի «ժների» երկիրը: 9. Հրեական ծագման տղամարդու Աստվածաշնչյան անուն: 13. Ավանակի «որդին»: 15. Հայ անվանի գրասան: 17. Երաժշտական գործիք: 18. Իր դատարանով հայտնի քաղաք Նիդերլանդներում: 19. Բյուզանդական կայսր: 23. Վրաց անվանի դերասանուհի Լեյլան: 24. Գարնան գուշակ ծաղիկ: 27. «... աշխարհ պտուտ եկա» (Սայաթ-Նովա): 28. Հայ միջնադարի բանաստեղծ ... Հովնաթան: 31. Ակսել Բակունցի գրական հերոս ... դայի: 33. Մաթեմատիկական անհայտ մեծություն, տառը: 35. Ռաֆֆու վեպերից: 36. Արեգակնային համակարգի մոլորակ: 39. Որեւէ պատկերով ձեւ, կերպարանք: 41. Հեռուստատվարուհի ... Չիլինգարյան: 43. Թբիլիսիի Խոջիվանքի վիպասանը: 44. Շոթա Ռուսթավելու գրական հերոսուհի: 46. Թթու, խեղդող համ: 50. Կոմպոզիտոր, գործիքավորող ... Գեորգյան: 52. Թունավոր օձ: 53. Ժամանակի միավոր: 55. Թիվ, քանակ: 56. Լոնդոնի Արքայական ընկերության կազմակերպած արշավախմբի հրամանատար: 57. Համադասական շաղկապ: 58. Անորոշ դերանուն: 62. Մաշտոցյան այբուբենի զինվոր: 63. Ժխտական նախածանց:

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊՍՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հորիզոնական. 7. Անարխիստ: 8. Սխեմա: 9. Բեն: 10. Գառնի: 13. Հաագա: 18. Լվիվ: 19. Քանաքարա: 22. Բարաք: 23. Կտավատ: 28. Նյասա: 29. Ուշունց: 32. Ուֆա: 33. Ուրար: 34. Զլոտի: 37. Դուռ: 39. Խաթա: 41. Զերծ: 44. Գոլֆ: 46. Ուրֆա: 47. Ծափ: 49. Վախ: 50. Խուբիլայ: 52. Դիակ: 54. Գոմեշ: 55. Ցեցե: 56. Տո: 57. Սայր: 58. Սուրբ: ՈՐՂՈՆԱՅՑՆՆ. 1. Ժայռ: 2. Ծխնի: 3. Սաբա: 4. ՀՄՍՀ: 5. Սելավ: 6. Գառն: 11. Արաք: 12. Նպար: 14. Ալքայ: 15. Գիլա: 16. Բաթ: 17. ՍԱԿ: 20. Նամուր: 21. Քաղցր: 24. Տնագ: 25. Վաստ: 26. Տատի: 27. Սուրու: 30. Շուրա: 31. Նասա: 35. Լեզու: 36. Տորֆ: 37. Դրո: 38. Ռաֆայել: 40. Թափում: 42. Երեկ: 43. Ծածկոց: 44. Գրիշա: 45. Լվացք: 48. Ախոռ: 51. Բեն: 52. Դեն: 53. Ատր:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՉՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԿԵՂՅԱՆ

ՔՅՅԵՈ ՅՈՆԱՅՅԵՄՈ: ԹՅՈՂՈՆՈ 0105, Ճ.ՆՈՐՇՆՈՆԻ ՄՅՅՈ 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ԹՅՂ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 Կ - 1439
«ԿՈՆՈՐ» հրատարակչություն

«ՅՐԱՆԻՍՏԱՆ»
ԹՅՈՂՈՆՈ, ՆԱՅՅԵՄՈՅԵՄՈ
«ՅՐԱՏԱՆ»
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445